1668·

Գրեցաւ Պատարագամատոյց տետրակս ի վայելումն Տեառն Յակոբայ երջանիկ քահանայի, ի Թվիս մերում ՌՃ և վեշտասան, յապրիլ ամսոյ Հռովմայեցւոց 23· ի հայրապետութեան Հռովմայեցւոց Տեառն Աղեքսանդրու Է· ի կաթողիկոսութեան որ ի Ս· Էջմիածին Տեառն Յակոբայ, և յարհիեպիսկոպոսութեան Տեառն Նիկողայոսի· ի թագաւորութեան Եան Կազմիրի, երկիրս Լեհաց, ի մայրաքաղաքս Լով, և ի դպրատանս Հայոց։ Զհանդիպողդ՝ յիշել աղաչեմ յաղօթս՝ զգրիչս։ [Ի Հռովմ]։

1672·

Գրեցաւ և կատարեցաւ սուրբ երգարանս մարգարէին Դաւթի՝ ի քաղաքս ի Վարշաւ, ձեռամբ անարժան և բազմամեղ Ոսկերիչ Գրիգորի· զի յայսմ ժամանակի փախստական եղաք ի ձեռաց հակառակողաց Ս· Խաչին Քրիստոսի· և այս եղեւ ի գալստենէ Փրկչին մերմէ ի Քրիստոսէ ՌՈՀԲ ամի, օգոստոսի 16ին· Եկեալ ազգին տաճկաց և տիրեցին զԳամենից· և յետ հինգ աւուրց եկին չարքն հասան ի քաղաքն Լվով· ութ օր և ութ գիշեր պատերազմեցաւ Թուրքաց ազգն և քաղաքացիքն ի հետ միմեանց, մին օրն և մին գիշերն հինգ վեց հարիւր թօփ քաշեցին առ միմեանս, թող թէ զանհամար թուփանկն։ Գոհանամ զառատ ողորմութիւնն Աստուծոյ, որ ոչ ետ ի ձեռն չարեաց զքաղաքն և զքաղաքացիս, և զսուրբ եկեղեցիքս պահեաց ողորմութեամբն իւրով։ Եւ յետ այսոցիկ 80,000 զուռիչ կտրուածք արարին քաղաքացիքն և տալու եղան Տաճկաց՝ որ ելանեն և գնան· և Տաճկաց փաշա մի կար ի հետ իւրեանց, որ էր չարագլուխ, և անուն նորին կոչէին Ղափլան փաշայ· նա 80,000 զուռիչի խապուլ կեցաւ, և ութ հոգի դրաւակ տվին· էառ զնոքա և ելեալ գնաց, մինչեւ առցէ զ80,000 զուռիչն, և զայն ութ հոգին ի հետ դարձուցանէ։ Այն ութ հոգին էր՝ երկուքն Լեհ, երկուքն Հայ, երկուքն Ռուս և երկու այլ Հրեայ։ Եւ յետ այսորիկ այսքան որ ահ և դողումն և սով քաշեցին Լովու քաղաքացիքն՝ որ մերձեցաւ ի մահ, և յետոյ խորհեցան փախչել ի քաղաքէն Լովէ, վասն այսորիկ՝ եթէ լինի թէ տաճիկ ազգն դառնայ և կրկին անգամ գայ ի վերայ Լով քաղաքի, կէսքն քաղաքացւոց կամ թէ այլ աւելի փախստական եղաւ· որքն կոչեցին (չուեցին) ի Գրագով, և որքն գնացին ի Տանցկայ, և մին բաժին այլ եկին ընդ մեզ ի Վարշաւ։ Եւ եկեալ տեսաք զքաղաքն Վարշաւ, որ ոչ ունին իւրեանց առանձին եկեղեցի մեր Հայոց ազգս, և ոչ մին փոքրիկ աղօթատեղի, և ոչ մին հայզրուց քահանայ, և կամ մին խրատիչ, որ նովաւ մխիթարին։ Եւ ես նուաստ ոսկերիչ Գրիգորս՝ խորհեցայ ի մտի իմում, թէ լաւ էր որ մին Սաղմոսարան լինէր ի ձեռին իմում՝ որ մխիթարէի· սկսեցի զՍաղմոսարանս, ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի, այսպիսի խոշոր և կոպիտ գրով· մի՛ մեղադրէք, զի կարիքս այսքան էր՝ այս հոգաբեր տարոյս· և ունիմ ասել